# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

« 14 » մարտի 2024թ. № **31-Ա**

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍՊԱՐՏԱԿ ՎԱՉԻԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48[1]-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04032024-06-0033 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան հրապարակ, 4/5 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-0276-0022 կադաստրային ծածկագրով 0,002 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ավտոտնակ կառուցելու համար, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով Սպարտակ Վաչիկի Բադալյանին տրամադրելուն:

2. Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճար սահմանել 6000 ՀՀ դրամ

| ԿՈՂՄ ( 13 ) | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 1 ) |
|---|---|---|
| ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ | | ՆՈՒՆԵ ԷՀՏԻՔԱՐՅԱՆ |
| ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ | | |
| ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ | | |
| ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ | | |
| ՋԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ | | |

ԿՈՂՄ ( 13 ) ԴԵՄ ( 0 ) ՁԵՌՆՊԱՀ ( 1 )

ՎԱԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ____________ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. մարտի 14
ք. Սպիտակ